



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏ

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն Թ Ի Վ 9

**ԵՊՀ-Ի ՀԱՅ ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԽՈՐՀՐԴԻ՝  
2019 Թ. ՄԱՅԻՍԻ 29-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՆԻՍՏԻ**

Օրակարգում՝

1. Ավարտական աշխատանքների պետական քննական հանձնաժողովների նախագահների հաշվետվությունը:
2. Առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորում:
3. 2018-19 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ամփոփներում:
4. Կուրատորների տարեկան հաշվետվություն:
5. Ընթացիկ հարցեր:

Սկսելով գիտխորհրդի նիստը՝ հայ բանասիրության ֆակուլտետի դեկան պրոֆ. Ա. Ավագյանը իր խոսքի սկզբում տեղեկացրեց, որ գիտխորհրդի 29 անդամներից նիստին մասնակցում է 26-ը, և ապահովված է անհրաժեշտ քվորումը: Նա այնուհետև ծանոթացրեց օրակարգի հարցերին, որոնց քննարկումը միաձայն ընդունվեց բաց քվեարկությամբ:

**1-ին հարցի** առիթով պրոֆ. Ա. Ավագյանը ձայնը տվեց ավարտական աշխատանքների պետական քննական հանձնաժողովների նախագահներին (Գ. Գևորգյան և Վ. Գրիգորյան): Նրանք իրենց խոսքում մասնավորապես նշեցին հետևյալը.

- 2018-2019 ուստարում «Հայոց լեզու» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 84 ուսանող, որից 54-ը՝ ժամանակակից հայոց լեզվից, 14-ը՝ հայոց լեզվի պատմությունից, 16-ը՝ լեզվաբանությունից:

Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝

ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 54 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 30, լավ՝ 16, բավարար՝ 8 ուսանողներ.

հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 14 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 9, լավ՝ 5 ուսանողներ.

լեզվաբանության ամբիոն՝ 16 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 6, լավ՝ 6, բավարար՝ 4 ուսանողներ:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել են 11 ուսանող՝

ժամանակակից հայոց լեզվի ամբիոն՝ 9 ուսանող, որոնք բոլորն էլ ստացել են «գերազանց» գնահատականներ.

հայոց լեզվի պատմության ամբիոն՝ 1 ուսանող, որը ստացել է «գերազանց» գնահատական.

ընդհանուր լեզվաբանության ամբիոն՝ 1 ուսանող, որը ստացել է «գերազանց» գնահատական:

2018-19 ուստարում «Հայ գրականություն» առարկայից ավարտական աշխատանք է պաշտպանել 42 ուսանող: Ավարտական աշխատանքների պաշտպանության արդյունքներն են՝ գերազանց՝ 18, լավ՝ 21, բավարար՝ 3:

Մագիստրոսական թեզերի պաշտպանությանը մասնակցել են 14 ուսանողներ.

հայ գրականության պատմության ամբիոն – 6 ուսանող, որոնցից՝ գերազանց են ստացել 4, լավ՝ 2 ուսանողներ.

նորագույն գրականության ամբիոն - 5 ուսանող, որոնցից գերազանց են ստացել 4, լավ՝ 1 ուսանողներ.

գրականության տեսության և գրաքննադատության ամբիոն - 3 ուսանող, որոնք ստացել են *գերազանց* գնահատական:

Ավարտական աշխատանքների պաշտպանությունը անցել է գործող ընթացակարգին համապատասխան: Ավարտական աշխատանքների թեմաները արդիական էին, տարաբնույթ, ունեին անհրաժեշտ գիտագործնական ուղղվածություն, գիտական և ճանաչողական արժեք: Կային նաև զուգադրական բնույթի աշխատանքներ: Ինչպես բովանդակությամբ, այնպես էլ կառուցվածքային ու կատարողական առումով ավարտական աշխատանքները համապատասխանում էին նման աշխատանքներին ներկայացվող պահանջներին: Դրանցում հստակ նշված էին նպատակը, խնդիրները և ակնկալվող արդյունքները, հիմնավորված էր արդիականությունը, ուսումնասիրված էր համապատասխան գրականություն, և ներկայացված էին հետազոտության գործնական արդյունքները:

Ուսանողները կարողացան խոսքի տրամաբանական կառուցվածքով, լեզվական իրազեկություններով, թեմայի և աշխատանքի վերաբերյալ հարցերին տրվող պատասխանների և պարզաբանումների, բանավիճելու ու փաստարկներ բերելու կարողություններով արժանանալ համապատասխան գնահատականների: Այնուհանդերձ, կային նաև սակավաթիվ աշխատանքներ, որոնցում մասնակիորեն էր կատարված թեմային առնչվող գրականության վերլուծություն, հիմնավորված չէին սեփական մոտեցումները ուսումնասիրվող խնդրի վերաբերյալ, թեմաների ձևակերպումները երբեմն շատ ավելի ընդհանրական բնույթ էին կրում, քան դրանցում կատարված աշխատանքն էր:

Ընդհանուր առմամբ մագիստրատուրայի շրջանավարտների գիտելիքները ավելի բարձր էին: Նրանք տիրապետում էին մագիստրոսական աշխատանքների նյութին, մասնագիտական գիտելիքները համապատասխանում էին պահանջվող մակարդակին, իսկ որոշ ուսանողներ աչքի ընկան նյութի խոր իմացությամբ՝ զգալիորեն գերազանցելով պահանջվող մակարդակը: Հարկ է նշել նաև, որ մագիստրոսական աշխատանքների թեմաներն առավելապես արդիական էին, անդրադառնում էին հայագիտության մեջ վիճահարույց խնդիրների. այդ իրողությունն էլ առավել հետաքրքիր դարձրեց մագիստրոսական աշխատանքների պաշտպանությունը՝ երբեմն վերածելով այն բանավեճի: Աշխատանքների գերակշիռ մասը կառուցված էր նյութի տեսական մասի և գործնական հետազոտությունների համադրմամբ, դրանց մի մասում առկա էին փորձարարական հստակ տվյալներ և այդ տվյալներից ելնելով՝ կատարված էին անհրաժեշտ եզրակացություններ:

Ուսանողների պատրաստվածության բարձր մակարդակը, մասնագիտական իրազեկությունը, հետազոտական մեթոդների կիրառումը, փաստական նյութը դասակարգելու, վերլուծելու, գնահատելու կարողությունը վկայում են ուսանողների հետ համապատասխան ամբիոնների կատարած հանգամանակից և երկարատև աշխատանքի մասին: Ամբիոնները մեծ ջանք էին գործադրել ավարտական և մագիստրոսական աշխատանքների թեմաների ընտրության և դրանց իրականացման գործում, քանի որ նկատելի էին գիտական խնդիրների, դրանց լուծումների հստակ շարադրում և կիրառում արդի գիտակարգերում: Հատկապես կարևորում ենք այն փաստը, որ ավարտական և մագիստրոսական աշխատանքները կազմված էին գիտական գրագրության կանոններին համապատասխան: Ընդհանուր առմամբ ցանկանում ենք փաստել, որ համապատասխան ամբիոնների դասախոսները լավագույնս են իրականացրել իրենց պարտականությունները, այն է՝ թեզերի ղեկավարման և գրախոսման աշխատանքները. գրախոսություններում անաչառորեն վեր էին հանված վրիպակներն ու թերությունները, արված էին ուսանելի դիտարկումներ և առաջարկություններ, որոնք օգնում էին հանձնաժողովին աշխատանքը գնահատել ոչ միայն փաստացի թեզի և դրա ներկայացման հիման վրա, այլև գրախոսների կարծիքները նկատի ունենալով:

Հատկապես կարևորում ենք ժամանակակից հայոց լեզվի ամբիոնի /վարիչ Յու. Ավետիսյան/ կատարած հսկայածավալ աշխատանքը /ավարտական և մագիստրոսական աշխատանքների մեծ մասի /մոտ 70/ թեմաները առաջադրված էին այդ ամբիոնի կողմից/: Չնայած աշխատանքների մեծ քանակին՝ ամբիոնի կողմից առաջարկված թեմաներն աչքի էին ընկնում թե՛ արդիականությամբ և՛ թե՛ բազմազանությամբ. առաջադրված էին անգամ հայ լեզվաբանության մեջ չուսումնասիրված թեմաներ, և մագիստրոսներն ու բակալավրիատի ուսանողները հիմնավորված ներկայացնում էին իրենց ուսումնասիրությունները: Հարկ է շեշտել նաև այդ մեծաքանակ աշխատանքների՝ գիտական գրագրությանը համապատասխան ձևակերպված լինելը: Սա փաստում է այն մասին, որ ժամանակակից հայոց լեզվի ամբիոնը, որի վրա էր դրված ավարտական և մագիստրոսական աշխատանքների մեծ մասի պատասխանատվությունը, կատարել է հետևողական և ամենօրյա տքնաջան աշխատանք: Ամբիոնում իրականացվել է մագիստրոսական և ավարտական մոտ 50 աշ-

խատանքների քննարկում, որի արդյունքում ապահովվել է դրանց գիտական պատշաճ մակարդակը:

Վերոգրյալը նկատի ունենալով՝ կարծում ենք, որ անհրաժեշտ է այսուհետև ևս ավարտական և մագիստրոսական աշխատանքների համար այնպիսի թեմաներ առաջադրել, որոնք արդիական են և բխում են հայերենագիտության առկա հիմնախնդիրներից: Թեմաներ առաջադրելիս հարկ է առավել մեծ ուշադրություն դարձնել զուգադրական բնույթի աշխատանքներին՝ կարևորելով ուսանողների ինքնուրույն վերլուծական կարողություններն ու գործնական հմտությունները դրսևորելու փաստը: Նկատի ունենալով այն հանգամանքը, որ ավարտական աշխատանքների թեմաների ձևակերպումները երբեմն ընդհանրական բնույթ էին կրում և թեկնածուական կամ դոկտորական աշխատանքների վերնագրեր էին հիշեցնում, երբեմն նկատվում էր ավարտական աշխատանքի վերնագրի և բովանդակության անհամապատասխանություն, կարծում ենք, անհրաժեշտ է ավարտական աշխատանքների թեմաները քննարկել ամբիոնների նիստերում թեմաների հետ կապված թյուրմբոնումներից խուսափելու համար:

Անհրաժեշտ է առավել մեծ ուշադրություն դարձնել մագիստրոսական թեզերի և բակալավրիատի ավարտական աշխատանքների կատարման որակին՝ կարևորելով դրանցում փաստական նյութի վերլուծությունը, դասակարգումը և զուգադրումը, փաստարկված դատողությունների ու եզրահանգումների առկայությունը, առկա հիմնախնդիրների լուծման ասպարեզում ժամանակակից մեթոդաբանության կիրառումը: Հարկ է մեծացնել նախնական խորհրդատվությունների քանակը ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների համար, հստակեցնել աշխատանքի կատարման ընթացքի վերահսկողության մեխանիզմները, մշտադիտարկումների ժամանակ քննարկել ներկայացված թեզի կատարման ծավալը և մակարդակը՝ շեշտադրելով խնդրահարույց հարցերը, մեծացնել դասախոսների պատասխանատվությունը թեզերի հետ կապված աշխատանքների նկատմամբ, կիսամյակային հաշվետվությունների ժամանակ չբավարարվել ուսանողի կողմից ներկայացվող և ղեկավարի կողմից հաստատվող հաշվետվային փաստաթղթով, այլ պահանջել թեզի համապատասխան բաժինների էլեկտրոնային տարբերակները:

Կարևոր ենք համարում նշել, որ, ինչպես նախորդ, այնպես էլ 2018-19 ուստարվա ավարտական աշխատանքների և մագիստրոսական թեզերի պաշտպանության գործընթացը ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետում կազմակերպված էր պատշաճ մակարդակով, պահպանված էին ընթացակարգային բոլոր պահանջները: Հատկապես ցանկանում ենք բարձր գնահատել բանասիրական ֆակուլտետի դեկան Ա. Ավագյանի կատարած մեծ աշխատանքը, որի արդյունքում պետական քննական հանձնաժողովի աշխատանքները ընթացել են դեկանատի կողմից սահմանված ժամանակացույցի համապատասխան, քննական կարգի խախտումներ չեն եղել, և ամփոփիչ ատեստավորման քննական հանձնաժողովն աշխատել է գործնական և փոխադարձ վստահության մթնոլորտում:

**Օրակարգի 2-րդ հարցը** նվիրված էր առկա ուսուցմամբ ասպիրանտների տարեկան ատեստավորմանը:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Թագուհի Գեղամի Մանուկյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Թագուհի Մանուկյանը 2016 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Ֆեոդոր Դոստոևսկու «Կարամազով եղբայրներ» վեպի թարգմանությունը (թարգմանիչ՝ Կ. Սուրենյան), դեկավար՝ Բ. Գ. Դ., պրոֆ. Յու. Ավետիսյան:

Թագուհի Մանուկյանը 2016 - 2017 ուստարում մասնակցել է նախատեսված պարտադիր («Գիտության փիլիսոփայություն», «Մասնագիտական օտար լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Հոգեբանություն», «Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Մտավոր սեփականության իրավունք և պատենտագիտություն») դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Ծանոթացել է տեսական գրականությանը և առաջիկայում տպագրելու է մեկ հոդված: Ավարտել է ատենախոսության երկու գլուխների շարադրանքը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Ատեստավորել հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Թագուհի Մանուկյանին**:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Միրանուշ Էդուարդի Կեսոյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Միրանուշ Կեսոյանը 2018 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Ներակայումը արդի հայերենում», ղեկավար՝ Բ. Գ. Ղ., պրոֆ. Յուրի Ավետիսյան:

Միրանուշ Կեսոյանը 2018 - 2019 ուստարում մասնակցել է նախատեսված պարտադիր («Գիտության փիլիսոփայություն», «Մասնագիտական օտար լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Հոգեբանություն» պարտադիր, «Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Մտավոր սեփականության իրավունք և պատենտագիտություն») դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Ծանոթացել է տեսական գրականությանը: Շարադրել է ատենախոսության երկու գլուխները: Առաջիկայում պատրաստվում է տպագրության հանձնել երկու հոդված:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Ատեստավորել հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Միրանուշ Կեսոյանին**:

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ բանասիրության ֆակուլտետի հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ (առկա ուսուցում) **Անուշ Անդրանիկի Խաչատրյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** - Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ա. Աբաջյանը, դոց., դոց. Ա. Սարգսյանը, Բ. Ներսիսյանը:

Նշվեց, որ Անուշ Խաչատրյանը 2018 թ. ընդունվել է ասպիրանտուրա (առկա ուսուցում) «Հայոց լեզու» մասնագիտության գծով (Ժ.02.01): Նրա ատենախոսության թեման է «Էլեկտրոնային մամուլի լեզուն (բառապաշար և քերականական իրողություններ)», ղեկավար՝ Բ. Գ. Ղ., պրոֆ. Ռուբեն Սաքապետոյան:

Անուշ Խաչատրյանը 2018 - 2019 ուստարում մասնակցել է նախատեսված պարտադիր («Գիտության փիլիսոփայություն», «Մասնագիտական օտար լեզու», «Տեղեկատվական և կրթական նոր տեխնոլոգիաներ», «Հոգեբանություն», «Գիտական և գործարար գրագրություն և հաղորդակցում», «Գիտական հետազոտությունների մեթոդաբանություն», «Մտավոր սեփականության իրավունք և պատենտագիտություն») դասընթացներին և ստացել է համապատասխան կրեդիտներ: Ծանոթացել է տեսական գրականությանը: Շարադրում է ատենախոսության երկու գլուխները: Առաջիկայում պատրաստվում է տպագրության հանձնել երկու հոդված:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Ատեստավորել հայոց լեզվի ամբիոնի ասպիրանտ **Անուշ Խաչատրյանին** ատեստավորել:

**ԼՍԵՑԻՆ.**- Ակադ. Հր. Թամրազյանի անվան հայ գրականության պատմության ամբիոնի առկա ուսուցման 1-ին կուրսի ասպիրանտ **Աստղիկ Վալերիանի Սողոյանի** ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.**- Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Ս. Մուրադյանը, Վ. Մաֆարյանը, Վ. Գաբրիելյանը և Ժ. Քալանթարյանը:

Նշվեց, որ Նշվեց, որ Ա. Սողոյանը 2018թ. հուլիսի 3-ին ընդունվել է առկա ասպիրանտուրա ԵՊՀ հայ բանասիրության ֆակուլտետի հայ գրականության պատմության ամբիոնում ԲՈԿ-ի անվանացանկին համապատասխան «Հայ դասական գրականություն» (Ժ. 01.01) մասնագիտությամբ: Թեկնածուական ատենախոսության թեման է «Խաչատուր Աբովյանի պատումի արվեստը», գիտական ղեկավարը՝ ր. գ. դ., պրոֆ. Ալ. Ա. Մակարյան:

Թեմային առնչվող նյութերի հավաքագրման և դասակարգման աշխատանքներին զուգընթաց ԲՈԿ-ի անվանացանկով նախատեսված պարբերականներում տպագրության է հանձնել գիտական 3 հոդված. 1. «Խաչատուր Աբովյանի «Հագարփեշեն» երգիծապոեմը», ԵՊՀ ՈԻԳԸ գիտական հոդվածների ժողովածու, 2017, 1.2 (19), հասարակական գիտություններ, էջ 31-39, 2. «Խաչատուր Աբովյանի «Աղասու խաղը» քնարապատմողական պոեմի երկխոսային բնույթը» (տպագրման փուլում է, «Վեմ» համահայկական հանդես), 3. «Խաչատուր Աբովյանի «Աղասու խաղը» պոեմի պատումի արվեստը» (տպագրման փուլում է, ԵՊՀ, Հայագիտության հարցեր):



Ուսումնասիրել է Խաչատուր Աբովյանի բազմաժանր ու բազմաշերտ գրական ժառանգությունը և աբովյանագիտական գրականությունը (Ա. Տերտերյան, Պ. Հակոբյան, Ս. Բազյան, Վ. Պարտիզունի, Ն. Մուրադյան, Հր. Մուրադյան, Ե. Շահազիզ և ուրիշներ):

Ուսումնասիրել է նաև տեսական գրականություն՝ Ժ. Ժենետի, Վ. Շմիդի, Մ. Բալի, Լ. Դոլեգելի ուսումնասիրությունները պատումի տեության մասին, ինչպես նաև ծանոթացել է Ջ. Փրինսի «Նարատոլոգիայի բառարանին»:

2018-2019 ուստարում հաջողությամբ հանձնել է պարտադիր և ընտրովի դասընթացների ստուգարքները՝ ստանալով անհրաժեշտ կրեդիտները:

Պատրաստվում է հանձնել «Հայ դասական գրականություն» որակավորման քննությունը:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** -Ատեստավորել **Աստղիկ Վալերիանի Սողոյանին:**

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ նորագույն գրականության ամբիոնի երկրորդ տարվա ասպիրանտ **Աննա Սպարտակի Միկոյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ.** – Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ Աննա Միկոյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Զարեհ Որբունու պոետիկան» (ղեկավար՝ Բ.Գ.Թ., դոցենտ Ս. Գրիգորյան): Նա մասնակցել է ասպիրանտական բոլոր դասընթացներին և հանձնելով քննությունները՝ հավաքել է սահմանված բոլոր կրեդիտները: Ուսումնասիրել է ժամանակի պարբերական մամուլը:

Ուսումնասիրությանս համար համապատասխան մեթոդներ գտնելու նպատակով ուսումնասիրել է հատկապես կառուցվածքաբանական դպրոցի մեթոդաբանությունը, ֆորմալիզմի և ֆրանսիական նշանագիտական դպրոցի տեսաբանների դրույթները: Պատրաստվում է հրատարակելու երկու հոդված:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Ատեստավորել **Աննա Միկոյանին:**

**Լ Ս Ե Ց Ի Ն** - Հայ նորագույն գրականության ամբիոնի առաջին տարվա ասպիրանտ **Առլինա Արթուրի Սարգսյանի** հաշվետվությունը և ատեստավորման հարցը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Վ. Գաբրիելյանը, Ա. Ավագյանը, դոց. Ս. Գրիգորյանը:

Նշվեց, որ Առլինա Սարգսյանի թեկնածուական ատենախոսության թեման է՝ «Արդի հայ պատմավեպի պոետիկան» (ղեկավար՝ Բ.Գ.Պ., պրոֆ. Վ. Գաբրիելյան): Նա ուսումնասիրել է շուրջ երեսուն պատմավեպ, ինչպես նաև գրականագիտական հոդվածներ և աշխատություններ՝ կապված պատմավեպի ու պոետիկայի կառուցվածքային ու գաղափարական առանձնահատկությունների հետ: Հանձնել է պարտադիր և ընտրովի դասընթացների ստուգարքներն ու քննությունները: Այժմ պատրաստում է Ա. Պեպանյանի «Պապ թագավոր կամ մայրամուտից առաջ» և Ստ. Զորյանի «Պապ թագավոր» պատմավեպերին նվիրված հոդվածը, որը պետք է բացահայտի հայոց պատմության ամենահայտնի ու ողբերգական թագավորներից մեկի կերպարի նոր շերտերը:

2018 թ. սեպտեմբերից իբրև ընթերցասիրության ուսուցիչ է աշխատում «Հայ ասպետ» դպրոցում, որտեղ երեխաների հետ ուսումնասիրում է հայ պատմավեպերը:

Հավաքել է ասպիրանտական պրակտիկայի համար անհրաժեշտ կրեդիտները:

**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Ատեստավորել **Առլինա Սարգսյանին**:

**Օրակարգի 3-րդ՝** 2018-19 ուստարվա 2-րդ կիսամյակի քննաշրջանի նախապատրաստական աշխատանքները ամբիոններում, **հարցի** վերաբերյալ ելույթ ունեցան ամբիոնների բոլոր վարիչները և հայտնեցին, որ ամենայն լրջությամբ ու պատասխանատվությամբ արդեն պատրաստվել են քննաշրջանի գործընթացին:

**Օրակարգում 4-րդ հարցի** առիթով ելույթ ունեցան երկու կուրսղեկները՝ դոց. Ա. Հայրապետյանը և ասիստենտ Վ. Մուրադյանը:

**Լ Ս Ե Ց Ի Ն** – Կուրատորների տարեկան հաշվետվությունը:

**ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ** – Պրոֆ., պրոֆ. Ա. Ավագյանը, Յու. Ավետիսյանը, Ս. Մուրադյանը, դոց. Ա. Հայրապետյանը և ասիստենտ Վ. Մուրադյանը:

Ելույթ ունեցող կուրատորներից առաջինը՝ դոց. Աշոտ Հայրապետյանը, մասնավորապես նկատեց հետևյալը.

- Ստանձնելով հայ բանասիրության ֆակուլտետի 2018-2019 ուստարվա առկա ուսուցման 1-ին կուրսղեկի պարտականությունը՝ կատարել են հետևյալ աշխատանքները.

## 1-ին կիսամյակում.

1. ծանոթացրել եմ համալսարանում գործող կանոնակարգերին և ավանդույթներին,
2. ուսանողների իրավունքներին և պարտականություններին,
3. խրախուսել եմ ուսանողներին՝ մասնակցելու ֆակուլտետում և համալսարանի շրջանակներում կազմակերպվող միջոցառումներին և հատկապես գիտաժողովներին,
4. պարբերաբար հանդիպել եմ ուսանողների հետ, խորհրդատվությամբ օգնել նրանց՝ լուծելու կրթական գործընթացում առաջացած խնդիրները, ուղղորդել մասնագիտական խորհուրդներով,
5. սեպտեմբեր ամսին այցելել ենք ԵՊՀ-ի գրադարան. ծանոթացել բանասիրությանը հատուկ հիմնարար գրականությանը և բառարանային ֆոնդին,
6. մի խումբ ուսանողների հետ այցելել ենք Հովհաննես Այվազովսկու կտավների ցուցահանդես՝ կազմակերպված Հայաստանի պատմության թանգարանում,
7. փորձել եմ ծանոթանալ նաև ուսանողների սոցիալական և անձնական խնդիրներին և հնարավորինս սատարել նրանց,
8. այցելել ենք Եղ. Չարենցի տուն-թանգարան,
9. այցելել ենք Մատենադարան,
- գ) հունիսին՝ նպատակ ունենք այցելել Պ. Սևակի տուն-թանգարան:  
Ելույթ ունեցող հաջորդ կուրսատորը՝ Բ. Գ. Թ., ասիստենտ Վիկտորյա Մուրադյանը, իր հաշվետվության մեջ նկատեց հետևյալը.

- Այս ուսումնական տարի կուրսատոր եմ առկա բաժնի 1-ին կուրսի առաջին խմբում:

Կիսամյակի ընթացքում որպես ուսումնական խորհրդատու աշխատել եմ հետևյալ ուղղություններով.

1. Տարվա սկզբին կազմակերպվել է այցելություն ԵՊՀ գրադարան, ուսանողները ծանոթացել են գրադարանից օգտվելու, գրքեր պատվիրելու և առձեռն ֆոնդից օգտվելու կանոններին, ծանոթացել են այն բաժիններին, որոնք առկա են գրադարանում:
2. Մշտական հանդիպումներ եմ ունեցել ուսանողների հետ: Ներկայացրել եմ ուսանողի իրավունքներն ու պարտականությունները: Լինելով 1-ին կուրսի ուսանողներ՝ նրանք բավական շատ տեղեկատվության կարիք ունեն: Տարբեր հարցերի շուրջ

կազմակերպել եմ քննարկումներ, պարզաբանել նրանց հետաքրքրող տարբեր հարցեր:

3. Ուշադրություն եմ դարձրել հատկապես ուսանողների հաճախումներին, բացակայությունների պատճառներին և փորձել հնարավորինս կրճատել բացակայությունների թիվը, խրախուսել նրանց ներկայությունը դասերին:
4. Ընթացիկ քննությունների շրջանում հանդիպել եմ երկու անգամ՝ քննաշրջանից առաջ և հետո: Քննություններից առաջ խորհուրդներ եմ տվել՝ հատկապես լեզվական առարկաների հետ կապված, ուղղորդել նրանց անհանգստացնող հարցերում: Քննություններից հետո նրանց հետ ամփոփել եմ քննաշրջանի արդյունքները: Աշխատել եմ ուսանողներին ներգրավել ֆակուլտետային գիտական և ճանաչողական միջոցառումներում, նրանց մեծ մասը նոյեմբերի 30-ին մասնակցել է հայոց լեզվի պատմության ամբիոնի կազմակերպած «Աբեղյանական ընթերցումներ» ամենամյա հանրապետական գիտաժողովին՝ որպես ունկնդիր, որից հետո կազմակերպել ենք փոքրիկ քննարկում նրանց հետաքրքրող հարցերի շուրջ:


**Ո Ր Ո Շ Ե Ց Ի Ն** – Կուրատորների աշխատանքը գնահատել բավարար:

Վերջում պրոֆ. Ա. Ավագյանը, ամփոփելով գիտական խորհրդի նիստը, շնորհակալություն հայտնեց մասնակիցներին, և նիստը հայտարարվեց ավարտված:

**ԽՈՐՀՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ**

**ՊՐՈՖ. Ա. ԱՎԱԳՅԱՆ**

**ԳԻՏՔԱՐՏՈՒՂԱՐ**



**ՊՐՈՖ. ԱԼ. ՄԱԿԱՐՅԱՆ**